ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«08» հունվարի 2025թ. No 2/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Քլին Զոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/9-1

Մասնակից՝ «Քլին Զոն» ՍՊԸ

ՀՎՀՀ 02662083, գործունեության հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 109/21

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Պատվիրատու) և «Քլին Զոն» ՍՊԸ-ի (Կատարող) միջև 05.12.2023թ. կնքված Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/9-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Կատարողը պարտավոր էր Պատվիրատուին մատակարարել 1 տոննա կշռողունակությամբ թվով 6 հատ և 3 տոննա կշռողունակությամբ թվով 3 հատ էլեկտրոնային կշեռքներ:

Երկրորդ չափաբաժնով ներկայացված ապրանքը՝ 3 տոննա կշռողունակությամբ թվով 3 հատ էլեկտրոնային կշեռքները չեն ընդունվել Պատվիրատուի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանցված պահանջներին 6 կետով: Կատարողը հետ տանելով չնդունված ապրանքը, երկրորդ անգամ, արդեն Պայմանագրով սահմանված ժամկետից 160 աշխատանքային օր ուշացումով, Պատվիրատուին է ներկայացրել 3 տոննա կշռողունակությամբ թվով 3 հատ էլեկտրոնային կշեռքներ, որոնք կրկին չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված պահանջներին այս անգամ 5 կետով: Ներկայացված ապրանքը նույնպես չի ընդունվել Պատվիրատուի կողմից:

Հաշվի առնելով Կատարողի կողմից Պայմանագրի պայմանների էական խախտումները Պայամանգրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է եղել միակողմանի մասամբ լուծել Պայմանագիրը:

Եզրահանգում

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով որոշում եմ՝ «Քլին Զոն» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1/8/2025

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ